


Տարեկան գինն է 10 ռուբլի:
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ:
Խմբագրատունը բաց է տան օր բացի կիրակի և տօն օրերից
առաւօտեան 11—2 ժամը կէտրից յետ:

Օտարաքաղաքացիք գիտում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցեով. — В редакцію «Мелу Адастану», в Тифлисе, կամ Redaction de «Meghou Haastani», à Tiflis. (Caucase).



Խմբագրութեանն ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ պրում լինեն զրոյի ստորագրութեամբ եւ հասցեով: Խմբագրութիւնը կարող է փոխոյնել, ուղղել եւ կրճատել յօդուածները: Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցարհանջ:

Յայտարարութիւնների համար վարում են ամիս մի քանի 2 կոպ. Յայտարարութիւններ ընդունվում են օտար լեզուներով, Յայտարարութիւններ ընդունվում են Խմբագրատանը, ակովկաս: հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են պ. Ծաղկերիանի պովիտում:

ԿԱՐՍԻ ԳՊՐՈՑՆԵՐԻ պատրաստական դաստանը Համար Հարկաւոր է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ կ'ունենայ չաբաթական
24 դառ հայ և ռուս լեզու-
ներից: Տարեկան ռոճիկը 400
ռ.: Դիմել Յովակիմ Գեղա-
մեանցին «Մեղուի» խմբագ-
րատանը: 2—1

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ.
Ֆրանսիացի և ռուս լրագրողները
Ներքին Տեսուչիւն. — Թը-
թակցութիւններ վանից և Թիֆլիսից:
Մանր լուսերը:
Խառն լուսերը:
Յայտարարութիւններ:
Բանասիրական. — Գիտելու:

ԹԻՖԼԻՍ, 30 ՕԳՈՍՏՈՍԻ 1884 թ.

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՒ ՌՈՍԻ ԼՐԱԳՐՈՒ- ԹԻՒՆԸ.

Ֆրանսիոյ յայտնի հեղինակ և քա-
ղաքական գործիչ Ժակ Միմոնը վեր-
ջին օրերուն խիստ կերպով ֆրան-
սիոյ լրագրութեան վրայ յարձակուե-
ցաւ: Նա ցաւօք սրտի յիշում է այն
ժամանակը երբ ֆրանսիական մեծ
լրագիրները խմբագրութեան էին ընծո-
րէն, երբ նրանց բովանդակութիւնը
հիմնաւոր էր, ճշգրիտ օգտակար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԵԴԵԻ.

(ՉՈՐՍ ՕՐՈՒՄԱՑ ՊԵՏԱԿՈՒԹԻՒՆ)

Երեւոյ վերջին գումարը օրերից մէկն
էր Ամառնային տար արեւ ճառագայթ-
ները ոսկեգոծել էին Ախալցխան շրջա-
պատող լեռների գագաթները: Քաղաքի
բարեպաշտ ժողովուրդը գունդ գունդ
գուրս գալով եկեղեցիներից՝ գնում էր
ամեն ոք իւր բան ու գործին: Զամաւոր
կանայք, որ, սովորաբար, այդ մարդիկ-
ներից յետոյ են դուրս գալիս եկեղեցի-
ներից, չարան-չարան կանգնած են
քաղաքի բարձրաւանդակների վը-
րայ, այլը՝ իրանց տների կտորների
վրայ, և անկապի մտիկ էին տալիս դէ-
պի «Ջիրիթ-Մէլոյան» հրապարակը, որ
գտնուում է փոքրիկ գետի ձախ ափին:
Հրապարակը, չէ նայած իւր ընդարձա-
կութեանը, հազիւ կարողանում է տե-
ղաւորել այնտեղ եղած ահապին բազմ-
մութիւնը և անցողաբար անդնելը: Զո-
րքս զոյգ գաւու գլուխների ածողնե-
րը հրապարակի չորս անկիւնների վրայ
կանգնած՝ ածում են հաւ ածում: Ախալ-
ցխայի ողջ հովիտը թնդում է արիա-
կան այդ նուազարանների ականջի թմը:

*) Տես «Մեղու» № 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66.

երբ հրապարակախօսները, նոյն իսկ
բանակաւոր տար ժամանակը, եր-
բէք չէին ստորանում անձնականու-
թիւնը շոշափելու, անկայելօրէն
հայհոյելու, ինչպէս կատարեալ փո-
ղցի մարդիկ: Մինչդեռ այժմ ֆը-
րանսիական լրագիրներն ըստ վկա-
յութեան Ժակ Միմոնի, շատ սակաւ
բացառութեամբ, առանց զըռանքի
կարելի չէ կարգաւ այնքան որ նը-
րանք լինեն ևն փողոցային յիշոցնե-
րով, բանասանքներով, բժախնդ-
րութեամբ և անձնական յարձա-
կութեամբ: Հրապարակախօսները բա-
ւականանում չեն միմիայն ժամանա-
կակից հիմնարկութիւնը ցելի մէջ
կոխելով, այլ նրանք մեղադրում են
նմանապէս ամենատեսակ ցածու-
թեանց մէջ և՛ հասարակական ու
պետական գործիչներին, նրանց ա-
նուանում են զոյգ խարդախ և ա-
ւաղակ: Կարձ՝ ասած, ֆրանսիայի
այժմեան լրագիրները կարգաւ մարդ
կարծում է, որ թոկից փախածնե-
րի մէջն է բնակուում:

Մի և նոյն այս երեւոյթը նկատելի
է և մեղանում (Դուստրալում): Ա-
ռաջ ռուս մամուլը աստիճանը աւե-
լի բարձր էր: Լրագիրներուն մեծ
մասամբ, հանդիպում էին լուրջ,
ընդհանուր բովանդակութիւն ունե-
ցող յօդուածներ, այս կամ այն ըն-
թացիկ հարցի վերաբերութեամբ
հարուստ նիւթեր, վիճաբանական

բոլոր պատճառով սուր ու կոշտ ձայննե-
րը: Հիստորիա մարդկանց, արանց և կա-
նանց, ուրախ և բարձրաձայն խօսակցու-
թիւնը, բոկոտն մանկանց կանչ ու
վճիռները, բազմաթիւ ձիւղերների՝ ձի-
անների վրէժներն ու խրկիւնները, դապի
ու տրոփիւնը աւելի չփոխում էին հան-
դէսը:

Այստեղ մի քանի պատճառներ՝ մեծ և
փոքր կերպերը ձեռքբերում բռնած՝ ան-
դադար հարց ու փորձ են անում «դեռ
չկան» Այնտեղ այլը թղթի և չորի մէջ
առանձին առանձին փաթեթած խոնկ
ու մամը մի երկու տողաքի մէջն են
գետեղեցնում: Երբորդները իրանց ճա-
կատից և վիզի մանակներից մի մի,
երկերկու, մեծ և փոքր, ոսկիների կարա-
տելով թղթի կամ չորի մէջ են փաթե-
թում: Կարծեալ, և իրանց կողքին կանգ-
նողները հարցնում նոյնպէս «դեռ չե-
կան»: Ուտեղները և խմիչքները պար-
կերին, սկուտեղներին, բաց գետնի վրայ
բացուած սփռոցներին ոչ տեսակը կա-
րելի է իմանալ և ոչ էլ չափել:

Ձիւղերները, որոց բոլորի քէֆն էլ
քօք է, սկսեցին ջրիթ խաղալ: Հրապա-
րակը բացուեցաւ և մեր տղամարդիկը
սկսեցին իրանց հոճարը ցոյց տալ:
Մերին նման նրանց ձիւղերը չափում են
հազարի հարապարակը և ջրիթի ձիւղու-
նները նետերի նման անդադար այս և
այն կողմն են սլանում: Ձիւղի խաղա-
ցողներից մէկը գլուխն է թէքում, որ
ձիւղերը իրան չը զկալի, միւսը՝ ձին
վազած ժամանակ, ողջ մարմնով նրա
փորի տակն է մտնում, և մի հեւը թաւ:

լուրջ ձեռ և կերպարանք: Հիմնար
կութեանց և անձանց զէմ՝ եղած
անպատշաճ յարձակումները, ընդ
հակառակը շատ հազուադէպ էին:
Մինչդեռ այժմ ոչ միայն ռուս փո-
քըր թերթներն, այլ նա և մեծա-
մեծներն, նրանք, որոնք հասարա-
կութեան զեկաւար կողմնու յաւակ-
նութիւն են ցոյց տալիս, — նոյն իսկ
դրանք սաստիկ ընկած են:

Որովհետեւ լրագրութիւնը հասա-
րակական կարծեաց հայեկէն է, ուս-
տի պէտք է կարծել որ ինչպէս ֆը-
րանսիայում այսպէս և մեղանում
հասարակաց մտածողութեան և բա-
րոյականի աստիճանը ստորացել է:
Բայց այս եղանակով լրագիրը վաղվա-
կոտ կը լինէր: Ինչպէս ֆրանսիայում
այսպէս և մեղանում լրագրութիւ-
նը այժմ այնպիսի շրջանների մէջ
է թափանցել, որոնք (շրջանները)
երբէք լրագրութեան ընթերցողներ
չեն: Սկզբնում լրագիր կարգում
էր միմիայն կրթեալ հասարակու-
թիւնը: Մինչդեռ այժմ կարգում է
կիսակրթի, անգամ անգրագէտ, հա-
սարակութիւնը ևս: Վերջին նոյնպէս
թերթ ձեռք բերելու կարիք է ըզ-
րում և հէնց դրա համար հրապա-
րակախօսները սրանց ևս բաւակա-
նութիւն տալու համար, իրանց
թերթը յարմարեցնում են նրանց
կոպիտ ճաշակին և նեղ հայեացք-
ներին: Այս կարծիքը հաստատուում

էր զվարճ ձգած, միւսով ընկերի թըռ-
րած ձիւղեր գետնից վերցնում և ձը-
րում ու արշաւում: Խաղաղութիւնը քա-
ղաքի անսովոր քաջութեանը ամբոխի
խուռն բաղրութիւնը ուժգին ծափահա-
րում է և պէնցեցներին գոռ գոչիւննե-
րով ողջ հովիտը թնդում, արձագանք
տալիս: Վայ նրան, որոյ ձին գալթեցաւ,
կամ ինքը ձիւց վեր ընկաւ, կամ սլա-
ցող ջրիթից չը կարողացաւ խուսափել:
— այդպիսի տղամարդուն ամբողջ իւր
քրքիլով և քամահարեղով բարոյապէս
ողանում է կատարեալ:

Գետին ալ կողմում գտնուած ս. փըր-
կիչ մայր եկեղեցւոյ կողմից՝ նոր նոր
գաւու գլուխների ձայները փրկում յան-
կարծ: Քառասուն հայ կողմների խմբու-
վին դուրս եկան եկեղեցւոյց, գաւթից
դուրս իրանց սպասող ծառայ և ազգա-
կանների ձեռքերիցը առան իրանց
զէնքերը, ոտքից ցզուլիս գլխաւորուե-
ցան և մի անգամ ևս երեսները խաչա-
կնքելով, եկեղեցւոյ դռնից վերցրած մի
մի ափ հողը իրանց բերանը ձգելով
թուան ձիւղների հեծան: Գաւու գլու-
խները չարունակ ածում էին:

— «Յաւանջ» ձայն տուեց ձիւղերնե-
րի սպառազինեալ յաւանջները, ուժ-
գնապէս մտրակեց ձին, մի քանի ան-
գամ օդում ճոճացրեց իւր ոսկեգոծեալ
և խաչանիշ վիթխարի նիզակը և առաջ
անցաւ: Ընկերները, ամենայն կարգա-
պահութեամբ, հետեցին նրան: Նրանք
զէպի «Ջիրիթ-Մէլոյան» էին գնում:
— Հարկաւ զու արդէն զվար ընկար
— ասաց ձերուին — որ եկեղեցւոյց դու-

է նրանով, որ «Temps» և «Journal des
Débats»-ի նման լուրջ թերթներն,
մինչ օրս իրանց կոչմանը թէ՛ հա-
ւատարմ են և թէ՛ ընթերցողների
աւելի մեծ քանակութիւն ունին:
Բայց այս լուրջ թերթերի թուում
ֆրանսիայում հրատարակութեան
և ուրիշ բազմաթիւ թերթերի ու-
րոնք անանում և ապրում են, ա-
ռաւելապէս սկսնդաւորելով հայհո-
յարանութեամբ և կարգացում
միմիայն անկրթներից:

Այս կէտումը ահա վերջանում է
ֆրանսիացի և ռուս լրագիրների ընդ-
հանուր բնաւորութեանց նմանու-
թիւնը: Մի քիչ առաջ մենք յի-
շեցինք, որ ֆրանսիոյ լուրջ թերթ-
թերթ ոչ էրէք դաւաճանում են
իրանց սկզբնաւորին, թէ՛ նրանցից և
ոչ իսկ մէկի մնողով չէ անցկենում
մա՛նր ստո՛ր և անկրթի, սահմանա-
փակ կոշտ ձաշակի խնդի ու մրո-
քի տէր մարդկանց ձեռքով խմբա-
րուած թերթերից փոխարինութիւն
անել ինչ է թէ իրանց թերթերին
այդպիսով ինչպիսիութիւն տան:
Մեղանում, ընդհակառակը, մեծա-
մեծ թերթերը այդ փառ նպատա-
կին հասնելու համար, ոչ մի միջո-
ցից չեն խորշում յաճախակի:

Բայց դեռ այդ էլ հերիք չէ: Ֆը-
րանսիայի փողոցային յետին թերթ-
թերթ ունի իւր քաղաքական որոշ

ուղղութիւնը: Իւր կիսակրթ ըն-
թերցողներին հաճոյացնելու համար
այդ թերթերը ինչ անկայելու զիբք
էլ որ բռնեն, այնու ամենայնիւ
նրանք շարունակ հետեւում են իրանց
բռնած որոշ ուղղութեանը, որից և
երբէք չեն հեռանում, լաւ գիտե-
նալով, որ դրանով նրանք իրանց
կործանման են դիմում ուղղակի:
Ֆրանսիայի ընթերցող նոյն իսկ կի-
սակրթ հասարակութիւնը քաղա-
քականապէս այնքան զարգացած է,
որ իսկոյն և եթ նկատում է թերթ-
թի շեղումը իւր ուղղութիւնից:
Մեղանում կան այսպէս անուան-
եալ մեծ թերթեր, որոնք, գրեթէ
ամեն օր, չեն խախտում փոխել ի-
րանց ուղղութիւնը: Եւ այդ տեսակ
պերճախօս փաստերով նրանք իրանք
ապացուցանում են, մտածող մարդ-
կանց առաջ, որ իրանք ոչ եթէ
սկզբնաւորների գնահատողներ են,
այլ միմիայն իրանց գրպանը հաս-
տացնելու վրայ են մտածում: Չանա-
զան յիմարութիւններով, զգայուն
բնաւորութիւն ունեցող յօդուած-
ներով և այլն, իրանց ընթերցողնե-
րին զուարճացնելով:

(«Նովոստի»)

գնացնելին մինչև սահմանադուրը հա-
նապարհ ձգող ազգական ու ծանօթ ձի-
ւորները:

Քիւրդ Հաջին նիզակը օդի մէջ ճո-
ճացրեց դարձեալ և դարձեալ «յաւանջ»
գոչեց, իւրոյ նուազածները միաբե-
րան փչեցին իրանց գործիքներն, դա-
ւաւները որտաղցին և խուճը չարժե-
ցաւ: Նուազարանների ներդաշնակու-
թեամբ հարկաւոր ձայներ երգել սկը
ոնցին:

Երգում էին «Ս. Կարապետի գովքը»
և այն թէ՛ ուխտագնացները և թէ՛ ժո-
ղովուրդը:

Սուրբ Կարապետ բարձր ու բոլոր
Շուռ ճամբներ ուր մօլոր,
Ուր գուռ կը գեայ՝ չառ ուխտաւոր
Կէսը բայեայ չ, կէս ձիւղոր
Ձիւղորին ոսկի խնձոր
Ուտաւորին մուրազ ետուր:

Սուրբ Կարապետն է մչեցի
Ուր որ գայի զինք յիշեցի,
Մտէս կուլ չըգայ լացի
Ձմուրստ ետուր, գացի տեսի,
Մուրաւատուր սուրբ Կարապետ:
Սուրբ Կարապետ Բաղմասարին
Ձմէջն է զարկել մաւմառ քարին ՝
Շնորհ կուտայ ուխտաբարբախն ՝
Մուրաւատուր սուրբ Կարապետ:
Սուրբ Կարապետն է թառումառ,
Գիշեր ցերեկ կանթեղն է վառ,

1) Կուրդայ.
2) Հետադու.
3) Ս. Կարապետի չիրմը մարմարին
քարից է շինած.
4) Վարպետ.

Վ. Ա. Ն.

1 օգոստոսի.

(Թղթակցութիւն «Մեղու» Հայաստանի լրագրի)

Թէպէտեւ տարիէն աւելի է որ «Մեղու» երեսը տեսած չենք մասնաւորապէս ամենայնիւ վստահ լինելով որ այդ պատուական թերթը վառ-պուրական աշխարհի հայոց գործե-րով և առօրեայ խնդիրներով էլ հետաքրքրվում և զբաղվում է իւր-գամ գրաւել նրա մի քանի սուղ էջերը նկարագրելու համար անցեալ յուշի ամսի վերջի շաբաթը որ վանեցուց համար այնքան մեծ կա-րեւորութիւն ունեցաւ և նշանաւոր եղաւ:

Յուլիս 21-ին Կ. Պոլսոյ բաժնի հասնելով հազիւ թէ լրագրիները ցրուեցան և երբ կայծակի արագութեամբ տարածուեցաւ մի լուր որ գոյժ մ'էր ժողովրդեան համար և բոլոր քաղաքը անպատմելի տխրութեամբ լեցուցւոյ այն էր «Արեւելք» օրաթերթի հրատարակածը թէ վա-նայ կայսերական—Ռուսական հիւ-պատուս կամաւարական-բեկը հրաժա-րական տուած լինի և թէ արդէն յաջորդէ և նշանակաւ: Այս ար-խուր լուրը իսկոյն բոլոր ժողովուր-դեան խորհրդածութեան առարկայ դարձաւ և շուկան խանութներում արմարաններում փողոցներում ու տներում սկսան հազար ու մէկ մեկ նուէրներ տալ զրաւ այլ և այլ կերպով բացատրել և զանազան հետեւութիւններ հանել: Այս առ-թիւ տիրող յուզումը երեւակայի և ըմբռնել կարենալու համար հարկ է գիտենալ թէ ի՞նչ մեծ նշանակու-թիւն ունի կամաւարական-բեկը հա-մայն վատպուրական համար իբր հայ մարդ իբր պաշտօնատար և մանաւանդ իբր ներկայացուցիչ Ռու-

սայ Մեծագոր Տէրութեան: Հետեւ-եալ օրը կիւրակի էր և ժողովուր-դը խանութ և կեղեցիաց դուրսի-նեցումը ու բակերումը շարունակ այս յոյժ կարեւոր խնդրոյ վրայ խո-սում էր: Վառվառ և կրակոտ երի-տասարդներ առաջարկում էին ան-միջապէս հանրապրութիւն մը ստե-րագրելով զիմեւ ուղղակի նորին Ամենապարտեալ Վեհափառութեան խնդրելու որ բարեհաճի շնորհել կրկին վատպուրական հայ ժողո-վրդեան սիրելի կամաւարական-բեկը: Այլք մի և նոյն նպատակի համար ուզում էին որ մի պատգամաւորու-թիւն ուղարկուի և վերջապէս ա-մենք համաձայնեմք որ նորին Կերպանցութեան էլ վան չը վե-րադառնայ մի մեծ և անդամուն-լի կորուստ էր հայոց համար և մի ստակի հարուած այս ընդարձակ երկրի բազմաթիւ քրիստոնէայ ժո-ղովրդեան որոնք նա զօրաւոր կեր-պով պաշտպանել էր յանուն Ռու-սական մեծագոր կառավարութեան ընդդէմ բազմաթիւ հարստահա-րութեանց և բարբարոսութեանց թրջաց և քրթաց:

Մինչդեռ յուսահատուած հայ ժողովուրդը երկար բարակ մտածում էր այս ազգային դարմանելու համար հարկ եղած ձեռնարկելի միջոցնե-րին վրայ: ձիւս որ մը ս. Գրիգորի վանքին (որ վանքն միայն երկու ժամու. հետ է) սրարշաւ գեպի քաղաք կը սլանար իբր աւետարտիչ հրեշտակ նոր և բարի լուրեր հա-ղորդելու: Հայոց աւելի տալու թէ կամաւարական-բեկ վերադարձաւ իւր միամեայ ձամբորդութիւնից և ար-դէն հասած է ս. Գրիգոր: Ձիւս որը ուղեւորեցաւ գեպի Ռուսական հիւ-պատուսարան և ահա 11 երկար ա-

միսներէ յետոյ վերադառնալ Ռուսական եւագոյն դրօշակը սկսաւ ծածանել ի մեծ միսթարութիւն յնծութիւն և զարմացում ամենեցուն: Կարելի է րապէ մը հազիւ տեսց մինչև այս ուրախութիւն լուրը արագապէս բեր-նէ ի բերան սրտնալով բոլոր քաղա-քացիներին ականջներին հնչեց և վհատեալ սրտերը սփռեց ամեն տեղ խնդում ուրախութիւն և բերե-րանք սփռելով բազմաթիւ քաղա-քը կարծում էր տեղեցի շարժելու և բազմութիւնը սկսաւ գիմել դէ-պի խաչ-փողան: Աւր կը գնանուի կայ-սերական—Ռուսական հիւպատուսա-րանը:

«Աչքդ լոյս!»—«Աչքդ լուսով է» այս էր բազմութեան բառաւարտ որ «ոյջոյն» ի նման միմեանց կը հա-ղորդուէր:

Ամեն մարդ անհամբեր ցանկանում էր տեսնել այն դարմանալի համա-բեկը գեպի որ հաւատարապէս ժը-տապի և արտում է և որ այնքան սիրելի է դարձած ոչ միայն քրիս-տոնէից այլ նա և իսլամաց առ հա-ւատարմի որոնք ոչ նուազ ցաւում էին կամաւարական-բեկի հրաժարու-լուն մասին:— Բայց դժբաղդարար նոյն օրը ոչ ոք չը տեսաւ նրան վան գե ձանապարհորդութիւնից յոյժած լինելով սրտած էր նորին Կերպանցութիւնը գիշերը ս. Գրի-գորում մնալ և միւս առաւօտ իջ-նել հիւպատուսարան: Հետեւեալ օ-րը ձիւս որդերի բազմութիւն մը կ'ուղեւորէր գեպի վանք հիւպատու-սը յաղթանակով քաղաք բերելու: Ժողովները լինէին հանդիսականնե-րով և ժողովուրդը անպատմելի ու-րախ գրութեան մէջ էր երևում: Բա-ւական ժամեր անցան մինչև որ նո-րին վանութիւնը հետեւէ երեւե-

ցաւ սպիտակ նժդիկի վրայ հեծած և շրջապատեալ ձիւս որ պատգա-մաւորաց խումբէն: Երբ մօտեցան էլ անկարելի եղաւ բազմութեան մէջ կարգ կանոն պահել: ամեն մարդ ընդ առաջ վազում էր հիւպատուսի ձեռքը համարելու և իւր զգա-ցած ուրախութիւնը արդարայնելու: Բխմաք Բեզ Աստուած—ի հաւա-չանքով: Վերջապէս հասան հիւպա-տուսարան ուր նորին վանութիւ-նը ընդունեց Ռուսահպատուս վաճա-ռականներին: Երկուստարգութեան կողմէն եկած պատգամաւորներին երկեցական հայրերին և ժողովուր-դեան ներկայացուցիչներին որոնք ա-ռանձին տանձին ուղեւորներով ի-րենց շնորհաւորութիւնները նուի-րեցին կամաւարական-բեկին ողջմամբ վերադառնալուն համար յայտնելով նա և թէ ներկայ տխուր և անուա-նելի յուսահատ վիճակում նորին վանութեան վերադարձը և ներ-կայութիւնը վատպուրականում հայ ժողովրդեան համար յուսոյ և քա-ջայքութեան մեծ պատճառ մ'է և անկասկածելի առհասարակ մը ի գիմաց Ռուսիոյ Մեծագոր Տէրու-թեան վան այն հայրական գորու-վալի համակրութեան որով նա վերաբերվում է միշտ առ համայն ծննդաւ և հարստահարալ քրիստո-նէայ ժողովուրդը ճաշ-Հայաստանի: Ի պատասխանի պ. հիւպատուսը շը-նորհակալութիւն յայտնելով իրեն եղած համակրալի ընդունելութեան համար քաջակերական խօսքեր ուղ-ղեց նոյաւ որոնք գոհ և ուրախ սրտով մեկնեցան:

Հետեւեալ օրը վարժապետաց այլ և այլ խումբերը վարժու հիւներ և աշակերտ ժամանաւորի կանգնեցան օրհորդաց վարժարանի ուսանողու-հիւր և ինամատարի Որբանոցի սա-

նունք ներկայացան նորին վանութե-թեան աւուր պատգաւի ուղեւորներ մատուցանելու *):

Հաստ հիւպատուսներ եկած գնա-ցած, ձանապարհորդած և վերա-դարձած են ըստ և ոչ մէկին հա-մար այնքան յուզում տրամուլեան և ուրախութեան միմեանց յաջոր-դել և ցոյց տեղի ունեցած էր եր-բէք և ասի բաւականեւ աւելի յայտ-նի կ'ընէ թէ վատպուրականի ժո-ղովուրդը որքան մեծ համակրու-թիւն կը տածէ առ վան: ներկա-յացուցիչն Ռուսաց հզօր Պետու-թեան: Արդ յուսոյ է որ նորին կայսերական վեհափառութեան կա-ռավարութիւնը նկատողութեան առնելով այս հանգամանքը կը բա-րեհաճի շնորհունելով կամաւարական բեկի տարածմանը հրաժարակա-նը մշտնջենաւոր հիւպատուս կարգել գայն վանայ ի մեծ միսթարութիւն

*) Մեր թղթակցը ուղարկել է մեզ ի տպագրութիւն տաւ Որբ. աններին ար-տասանած ձաւերի օրինակը, որոնք, ի տարբէր, չենք տպում: Մենք կարծում ենք, որ պ. թղթակցի իրան տաւ ձաւանման, թուղթի յօդուածն էլ շատ բաւական է մեր ընթերցողներին համոզելու, թէ վանայ մեր ազգայինը— Եթէ միայն ճշմարիտ են մեր թղթակցի տաւածներն— որքան անձնատուր են երևակայութեան և իրանց յափշտակութեան մէջ այն պիտի գործերի են միջամտում, որոնք երբէք իրանց քմահաճութեամբ կարող չեն առաջ գնալ, այլ ընդհակառակը մա-մանակին թիւքը տեղափոխան ձեռքն կա-րող են մի մի վէպ լինել: Պատերազմ-ները ժամանակ մեր տանկանայ եղբայր-ները աւելորդ և ծայրահեղ ջնքմանա-րգութեամբ ու ցոյցերով, և լին ջոյցե-րով, թիւքը ամբողջ մերկանողութիւն են գրգռում, իսկ իսպաղ ժամանակնե-րում օտար պետութեանց գործերի մէջ, ամենաանկող կերպով, խառնուելով, իւ-րանց տեղափոխան պետական անձանց մէջ, իրանց հաւատարմութեան մասին, կասկածներ ծնեցնում: Չենք հասկանում թէ այս տալանտութիւնը մինչև երբ պէտք է անեն:

Իմբ.

Ով որ դնաց զմուրաւն առ
Մուրաւաւաւ սուրբ կարապետ:
Սուրբ կարապետ խորան խորան,
Մէջը վրը սաղմոսարան,
Եթեման կարգանք մէկ մէկ բերան,
Մշտ սուլվան սուրբ կարապետ:
Սուրբ կարապետ սարերը
Սուրբով 5) կըգնան գաւանները
Արեւով լցուաւ գաւանը 6)
Մշտ սուլվան սուրբ կարապետ:
Գմբէթներդ զօշայ զօշայ 7)
Գուռը կուգայ բէզ ու փաշայ,
Գերեզմանիդ հոտն անուշ ա,
Մուրաւաւաւ սուրբ կարապետ:
Սուրբ կարապետ եմ գնացել,
Գունա տարել եմ մնացել 8)
Մուրաւաւ տակ չեմ իմացել
Մուրաւաւաւ սուրբ կարապետ:
— Զիբիթ-Մէջոյնից ժողովուրդը վա-զուց ցրուել էր, բայց ուխտագնացների այս անոյշ երգի անուշիկ ձայնը մօտա-կայ ձորերի միջից լսուում էր տակա-ւին:
ԿԻ.

Աւելորդ է քեզ տեսել—չարտնակեց ձերտնին—որ Ախալցխայի քառասուն ուխտագնաց երկասարկների թուումն

էր և՛ Լոն Անթուանը: Բայց ես քեզ այս ևս պէտք է յայտնեմ, որ փետրային հետ ս. կարապետ էր գնում և նրա ա-նեքաղը, պատանի Արշակը:
— Գա ինչ է նշանակում, հայրիկ:
— Սովորական բան: Բայց պատան-ւոյն ս. կարապետ ուղարկելուը նրա ծնող ազգականները մի հալիւ ևս աչքի առաջ ունէին: Հայրը այն է, որ Ար-շակը Արշակունի գերդաստանի վերջին ժառանգն էր: Հինգ վեց տարուց յե-տոյ նրան պէտք էր ամուսնացնել: Եւ որովհետեւ Ախալցխայում երկուստար-ները մինչև ս. կարապետի գերեզմանը համբուրելը՝ ընդհանրապէս չեն պատ-վում, որովհետեւ Աղանեանները հազիւ թէ ուրիշ աւելի յարմար միջոց գտնէին իրանց փոքրիկին, մինչև ամուսնացնելը, «Մշտ սուլվանի» ոտքը ծածկելով կամ անձամբ անձին տանել, ուստի և աւելի յարմար գտնեցին պատանւոյն Մշտ ու-ղարկել տանու փետրային ընկերակցու-թեամբ: Նա մանաւանդ, որ այդ մասին Աղանեաններից շատ թախանձեցին Գրիգոր աղան ու Արեւնաղան խա-նութիւն:
— Ինչի, հայրիկ:
— Սրանք էլ իրանց հայրն ունէին: Արշակի ներկայութիւնը Լոն Անթուա-նային կարող էր զգուշ պահել և միշտ յիշեցնել, որ ինքը Ախալցխայում կ'են ունի, և որ Արշակը այդ կնոջ հարազատ ու սիրելի եղբայրն է: Եթէ, ըստ սուա-ծին, աչքին չը տեսնող՝ անձին կու-տաւթիւն է՝ ուրեմն աչքին տեսածն էլ,

անձին զգուշութիւն է: Թէպէտ Լոնը ծնողացը խօսք էր տուել և երգում կե-րել, որ թէ ձանապարհին, թէ ս. կա-րապետում և թէ, յետոյ, Երզնկայում ինքնիրան չի մուսնաւ, իւր փափուկ զրուցիւնը միշտ աչքի առաջ կուենայ, այնու ամենայնիւ անեքաղի ներկայու-թիւնն էլ, իբրեւ մի խիտն, էլի հարկա-ւոր էր երկուստարը Անթուանին:
— Բայց չէ որ, հայրիկ, Լոն Ան-թուանը Երզնկայում պէտք է մնար:
— Ի՞նչ արած, կարծում ես թէ Ար-շակին աշխուղից, թէ կուզ միւս ուխտա-գնացների հետ, վերադարձնելը դժար էր միթէ: Վերջապէս այս ևս պէտք է գիտենալ, որ բայց Անթուանն այս ևս կնոջից, նոյնպէս Մարկոս աղայից ու Դարդոս խանութից՝ ոչ ոք չը գիտէր և չը պէտք էլ է գիտնար, որ երկուս-տարը Անթուանը թողնում է Ախալ-ցխայն: Ընդհակառակը, իթէ այդ լուրը Ախալցխայում յանկարծ լոյս ընկելը,— նրան հերքելու համար բաւական էր տ-եսել, որ դա անձինն լուր է, որովհետեւ երկուստարը Անթուանը իւր հետ վերցրած է անեքաղին Ուրեմն Արշա-կի գնողը խնամք աղաների և խնամք քուրիկների համարայն տուաւթիւնը ևս ունէր: Որովհետեւ, համաձայնից դու ինքդ, որ Ախալցխայից միայն շատ վատ տպագրութիւն կը գործէր, և թէ որ նրանք խանային, թէ Լոն Անթուա-նան բոլորովին թողնում է կնոջը, այն էլ նրա հիւանդ ժամանակին:

Խնամք աղաները այս ևս պա-նման

ուրիշ պարագաներ նախատեսել էին և իրանց դործը ամեն կողմից պինդ բը-նել: Նրանք միջոցների էին ձեռք գա-րել նմանապէս, որ մի գուցէ ախալցխա-ցիք լսեն, թէ Լոնը թողնում է Ախալ-ցխայն քաղաքագետի խորհրդով ու կողմնակի պահանջմամբ կարելի է ա-նել...
— Այսպէս թէ այնպէս—ընդհանրեցի ևս ծերունուն—Արշակը, ուրեմն, ուխ-տագնացների թուումն էր, հայրիկ:
— Այո:
— Հաստ ցաւում եմ:
— Ո՞ւմ վրայ:
— Գիտուհե՞ որոյ մրակ միսթարու-թիւնը, ինչպէս փոքր ինչ առաջ ինքդ էիր պատմում, Արշակն էր:
— Ճշմարիտ է, բայց Արշակի ծնողը նրա մասին ևս պէտք է մտածէին թէ ոչ, Ո՞չ ապաքէն գիժ Գիտուհին մի օր կարող էր պատանւոյն գլխին մի փո-քանք բերել: Առաջ է, «կատուին խաղը» մկին մաշոյ: Առաջին խնամք, ևս կար-ծեմ, բաւական յարմար էր գալիս Գըշ-խուհուն և Արշակի յարաբերութեանը, խաղերին: Ուրեմն, բարեկամ, հէնց այդ կողմից էլ պատանւոյն հեռանալը դար-ձեալ կարեւոր էր, բայց ով կարող էր գուշակել, որ հանգամանքները այնքան կերպարանաւորուէին, որ մինչև անգամ... Բայց մենք, սաւ աչքով, չը չեղունք մեր տաւաշապետը պատմութիւնից:

ԿԻ.

պարագաները նախատեսել էին և իրանց դործը ամեն կողմից պինդ բը-նել: Նրանք միջոցների էին ձեռք գա-րել նմանապէս, որ մի գուցէ ախալցխա-ցիք լսեն, թէ Լոնը թողնում է Ախալ-ցխայն քաղաքագետի խորհրդով ու կողմնակի պահանջմամբ կարելի է ա-նել...
— Այսպէս թէ այնպէս—ընդհանրեցի ևս ծերունուն—Արշակը, ուրեմն, ուխ-տագնացների թուումն էր, հայրիկ:
— Այո:
— Հաստ ցաւում եմ:
— Ո՞ւմ վրայ:
— Գիտուհե՞ որոյ մրակ միսթարու-թիւնը, ինչպէս փոքր ինչ առաջ ինքդ էիր պատմում, Արշակն էր:
— Ճշմարիտ է, բայց Արշակի ծնողը նրա մասին ևս պէտք է մտածէին թէ ոչ, Ո՞չ ապաքէն գիժ Գիտուհին մի օր կարող էր պատանւոյն գլխին մի փո-քանք բերել: Առաջ է, «կատուին խաղը» մկին մաշոյ: Առաջին խնամք, ևս կար-ծեմ, բաւական յարմար էր գալիս Գըշ-խուհուն և Արշակի յարաբերութեանը, խաղերին: Ուրեմն, բարեկամ, հէնց այդ կողմից էլ պատանւոյն հեռանալը դար-ձեալ կարեւոր էր, բայց ով կարող էր գուշակել, որ հանգամանքները այնքան կերպարանաւորուէին, որ մինչև անգամ... Բայց մենք, սաւ աչքով, չը չեղունք մեր տաւաշապետը պատմութիւնից:

Հիւանդը—սաւաւաւաւ զգաւտ ժա-մանակներին—շատ հետաքրքրվում էր Լոնին և Արշակի վիճակով: Նա անդա-կար պահանջում էր պատուից մի տա-մի պատմել նրանց սրբ կոխած տեղե-րին պատմութիւնը, պատմել թէ, ինչ է անում Արշակը, թէ նրան էլ արդեօք Լոնին հետ պատկույր՝ Ախալցխայի նոյն կայսերական է լինելու: Բեւաղարի հարցումներին Մարանը, բնականաբար, չէր կարող պատասխանել, և ինչ պա-տասխանէր, մինչդեռ, այնչէ չը պատէր, ուստի հիւանդը պատմել ստանձին հաճոյքով և ողբերգութեամբ հիւանդի

ԲԱԳՈՒԻՑ Կ. Ասպետը գրում է. —
Բազմաթիվ Վարչական ընկերու-
թեան» հիմնադրման կողմից դառն վերայ
մի խորհրդանոր յայտարարութիւն կայ
խափած, որ իւրաքանչիւր անցնողի ու-
շադրութիւնն է հրաւիրում իւր վերայ
Այս յայտարարութիւնը «Մ. ընկ.» տպա-
րանի կողմիցն է. Այս յայտարարա-
րութեան բառաւոր պատճէնը.

«Պատիւ ունիմք յայնեւոր որ տպա-
րան ենք բաց արել յայտը Մարդա-
սիրական ընկերութեանը չնախկինում,
որն որ դէմ ու դէմ է իրանի Ուսում-
նարանի Բազմաթիվ ընտանեանքը
և կատարում անեն սեռի բազմաթիվ
պատուներին զիջելով իւր յարմարա-
ւոր շուտ շուտ և չափաւոր գներով,
Ռուսից, յայտը, Տաճկան և փոքր էլ
մասնաւոր գաղղիացւոց լեզուով. Նոյն-
պէս և ընտանեանք ամեն տիպի կազ-
մելով պատուներին: Ստորագրում է.
Մեծարգոյն և Տէր-Օվանիսեան:

Եթէ ընդունենք, որ այդ բազմաթիվ
նորը գրում էին հեղինակը, ինչպէս նա
կատարում են, «Մ. ընկերութեան» զը-
րապան է, այն ժամանակ բառական է
ընթերցողին ինչեցնել, բազմում անգամ
մեր պարբերական մամուլի մէջ լոյս
տեսած յոգնածների կատարելա ճշտու-
թիւնը ինչպէս պարունի վերաբերմամբ:

ՓԱԿՈՒՄ ԶԷԴՈՒՆԻ ԽՆԴՐՈՅՆ.

Տեղական լրագրէն իմացում էր
արդէն թէ Զէյդունի մէջ փոքրիկ խն-
դիր մը ծագած է վերջերս, որոց քա-
նակութեան և վնասման եղանակներն
տեղական վարչութեան ինչ ինչ պարա-
գայից նկատմամբ, և թէ Հալպի կու-
սակաւն հարկ դատած էր զօրքով եր-
թալ Զէյդունի վրայ: Իսկ ինչ քանակ
հիշողութիւն ատու թուով հրատարակեալ
և մեր երեկի թուով արտասպառ նա-
ման, իւր պարունակած ինչ ինչ յայտ-
նի սխալներուն հակառակ, ի դէպ կեա-
ծանոցանելու թէ Զէյդունի այս նոր
գիտարարութիւն գահացողի կերպի կար-
գադրում է, չորսիս. Մարտի կառա-
վարիչ Տատա փոխարին չափաւորութեան
և զթուութեան հետ բարեխառնեալ ար-
դարաւորութեան խնդրէի թղթակցին
այս առթիւ ծանուցած մանրամասնու-
թիւնը յատուկ կարեւորութիւն մ'ունի
Դոնութեամբ կը տեսնենք թէ Տատա-
փաշա իւր լաւ ընթացքով Զէյդունցին-
րէն իրեն երեխապարտ թողել է, մի-
անգամայն բաւական լի միջոց խնդր
մը, որ կրնար որոշաւորութիւն պատճա-
ռել: Արեւելի ընթերցողը հետեւապէս
անշուշտ ուրախ եղան իմանալով մեր
երեկի թիւն թէ կեղծական կառա-
վարութիւնը բարեհաճած է վարձարել
այս իմաստուն կառավարիչ, Միւրմի-
րանի անորոշանը բարձրացնելով գնա-
լու ամեն անգամ որ կեղծական կա-
ռավարութիւնն արեւմտեան կը գնահատէ
գաւառական խորքը վարչութեան ի նը-
շանաւոր հանդիսացող կառավարիչները:

(Արեւելք)

Կը հաւատենք, թէ Մանչէսթէրի պա-
տարածան ազգայնոց նախորդ նովի
Դեր. Տ. Եսայի Դ. վարդապետ Աստու-
ծատրեանց արժէք Լոնտոն կը գտնուի, և
կախատի հանգանակութեամբ հաստա-
տել անդ Հայկական վարձարան մը, իւր
ունեցած 1000 լիւրայի չափ գումարն ալ
յատկացնելով նոյն հաստատութեան
Նորին Գերապատուութիւնն երբ Ման-
չէսթէրէն ելաւ և վերադարձաւ Տիգրիս,
կտակ ըրաւ որ իւր-այլ կրամ մահուա-
նէն յետոյ Տիգրիսի Ներսիսեան վարձա-
րանին մնայ:

Նոյն.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի է, որ ժառանգական և ան-
նական պատուամեծար քաղաքացիու-
թեան համար արուած հրովարտական
համար տեղութիւնը տուրք է ստանում:
Արդ՝ այդ տեսակ տուրք ստացուել է
1881 թուականին 19,007 ռուբլի, 1882-
ին—16,695 ռ. իսկ 1883-ին — 23,552
ռուբլի:

Ամերիկայի «Հեռագրային հեռագրական
ընկերութիւնը» վերջին ժամանակներու-
մըս չինաց լեզուով ևս սկսաւ հեռագրի-
ներ ընդունել և ուղարկել: Դրա համար
ընկերութիւնը մի քանի փոփոխութիւնք
և նորութիւնք է մտցրել հեռագրական
գործումը:

Շվեյցարիայում, Ռոնի հովտում, մի
զիւղացի արտահամար մի այդ գտնու-
մի փոքր լիւն և ջրվէժ կայ: Սա բնու-
թեան մի նոր հրաշալիքն է:

Լոնդոնում կայանալիք միջազգային
առողջապահական արուեստանոցէն
համար տիկին Գլատտընը մի զբոյժ
հրատարակեց, որով ցոյց է տալիս նըն-
ջարանների և մանկանց սենեկների մաք-
րելու միջոցները տարափոխել հիւան-
դութեանց ժամանակը: Գրքով տիկին
Գլատտընը մեծ անուն հանեց անշուշտ
ոչ այնքան գրքի արժանաւորութեամբ,
որքան Գլատտընի կինը լինելով:

Նորերում մեծնող նուագածու Լիստը
մի անգամ դաւաճական քաղաքներից
մէկում կամեցաւ երաժշտական երե-
կոյ սարքել: Վաղաքացիք իրանց բան ու
զործին անձնատուր լինելով՝ երաժշտու-
թեանը միմիայն 7 հոգի է կել էին: Լիս-
տը բեմի ելաւ և ասաց. «Տիկնայք և
պարտնայք, որովհետեւ մենք քչեր ենք,
ուստի խնդրում եմ համեցէք գնանք
իմ սենեակը և հանգիստ ու ինչպէս կա-
մի, նստելով, լսենք իմ երաժշտութիւնը:
Հանդիսականները գնացին և Լիստը իւր
յայտարարած երաժշտութիւնը լրիւ ա-
ծեց: Յետոյ մի լաւ ընթերց էլ տուեց
հիւրերին և այնպէս ճամբու դրեց:

Միւս անգամ, երբ Լիստը յայտարա-
րութիւն հրատարակեց, դարձեալ աս-
տեղ ձգելու տեղ չը կար:

Խմբագիր Պ. ՍԻՄԵՆՍԿԱՆՑ.
Հրատարակել է. ԵՆՖԻԱՃԵԱՆՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հայուարարու Շամբուցեւոց ս.
Աստուածածնայ եկեղեցւոյ նորա-
կառոյց ուսումնարանի հոգաբար-
ձութիւնը յայտնում է ի զիտու-
թիւն թիֆլիսի հայ հասարակու-
թեան, որ յիշեալ ուսումնարանի
աշակերտաց ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ
սկսում է ամսոյ 29-ից ամենայն օր
առաւօտեան 9 ժամից մինչև 12-ն:

(3—1)

Վանաց մայր եկեղեցւոյ ՄԱՆ-
ԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՂԸ տեղափոխվում է
ՍՈՒՅԼԱԿ Ստաւոյ փողոցում տի-
կին Ի. Ֆէնդիանի տանը. № 56. Ըն-
դունելութիւնը սկսվում է սեպտեմ-
բերի 1-ից: Նոյն տեղ ընդունվում
է ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ աշակերտների չափա-
ւոր գնով:

Օր. Մ. Մամիկոնեան

(5—1)

Ս. Գայիանեան օրիորդական ու-
սումնանոց վերաբերում է. —
Թիւնք և ՆՈՒ աշակերտու-
հեաց քննութիւնը և լո-
ւթիւնքը սկսում են օգոս-
տոսի 25-ից, իսկ ԴԱՍԵՐԸ — սեպ-
տեմբերի մէկից:

(2—2)

Մամուլի տալիս են և մինչև ու-
գոստոսի վերջը լոյս կը տեսնեն
«ՎԱՐՈՒՄԱՆ» և «ՄԱՆԿԱՎԱՐՈՒՄԱՆ»
ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ.

Հետեւալ երկու գրքերները.

1) «Անճ կուռմը և դաստիարա-
կութիւնը» հեղ. Լուիզա Բիւրնիերի
Թարգ. Գ. Շահրուբադեան:

2) «Ուրիշ ձկնիկ», մանկական վէպ.
Ա. Ս. Պուշկինի. — Թարգ. Գամառ-
Յաթիպա:

Մարիամեան — Յովնանեան օրիոր-
դաց ուսումնարանը ԲԱՅՈՒՆԻՈՒ Է
ներկայ օգոստոսի 27-ին:

(2—2)

Թիֆլիսի Նորաշէն եկեղեցւոյ ս.
Մարիամեան օրիորդաց ուսումնա-
րանի վերաբերում է. —
Թիւնք և ՆՈՒ աշակերտու-
հեաց քննութիւնը և լո-
ւթիւնքը սկսում են օգոստոս
ամսոյ 25-ից, իսկ ՈՒՍՈՒՄՆ — սեպ-
տեմբերի 1-ից:

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԷ և ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԻ

Մինչև օգոստոսի վերջը

Զ. Գրիգորեանի «Նովկանան» գրքա-
վաճառանոցի հրատարակութեամբ

Յ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶ. ՈՒՍՈՒՑԻԶ

Չ ո Ր Ր Ր Գ ա ռ ու ա յ
Ներկորդ տպագրութիւն՝ հիմնա-
կան փոփոխութեամբ.

2—3

Մամուլի տալից դուրս եկաւ.

«ՍՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ և ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԽՈՐՀՐԴՈՑ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԿԻ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵԼԵՑԻՈՑ».

Երկարութիւն Արսէն քա հ.
Բա գր ա տ ու ն է ո յ.

Մանվում է բոլոր դրամաւորների
մօտ և Ե. Մատուրեանի լամպի
խանութում: գինն է 50 Կ.: Նոյն
տեղերում ծախվում են վերոյիշեալ
հեղինակի և երկու աշխատութիւն-
ներն, այն է՝ «ՏԱՍՆ ՊԱՏԱՐԱԿ» գի-
նն է 25 Կ. և «ՎԵՐՋԻՆ ՅՈՒՇԻՆ».
գինն է 30 շապ:

3—10

ԲԱԳՐԱՏ ՄԻՐՈՒՄԱՆԵԱՆԻ ՈՒ-

ՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ

Եթէ տարեկան հասակի երե-
կայոց ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ և
ԳՆՆՈՒԹԻՒՆԸ սկսուելու են
ներկայ տարուայ օգոստոսի 27-
ին, իսկ ՈՒՍՈՒՄՆ սեպտ. մէ-
կին: Ուսումնարանի կանոնադ-
րութիւնը ցանկացողները կա-
րող են ձրի ստանալ ուսումն-
արանից: Ուսումնարանը զը-
տանվում է վերամիջնակի փո-
ղոցի վերայ իշխան Ամատու-
նու տանը № 11.

ԲԺՇԿԱՊԵՏ

Թ Ե Յ Ի Ը

Վերադարձաւ և ԱԶԳԱՅԱՆՈՎ
հիւանդներին ընդունում է ա-
մենայն օր առաւօտեան 9-ից
մինչև 10 ժ.: Հասցէն. Ստա-
նօսարենաւի փողոց № 17.
6—2

Վաղաքային վարչութիւնը ցան-
կանում է ՎԵՐԱՅԻ և ՀԱՆԼԱՐԱՐՎ
քաղաքային տարրական ԳՊՈՑՆԵՐԻ
համար Տ Ն Ե Ր վ ա թ է Լ
առաջին համար մի մեծ դահլիճ
50 աշակերտների համար, մի նա-
խասնական և երկու ուսուցչի
ուսուցչի համար, իւր խոհանոցով,
Յղինակի փողոցի կամ նորա մօտե-
րում իսկ երկրորդի համար երկու
դորա չափ բնակարան. հրաւիրում
է ցանկացողներին տալ իրենց տու-
նը, զիմեք քաղաքային վարչու-
թեանը:

ՀԱՆԼԱՐԱՐԻ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Հոգաբարձական-խնամակալական վարչութեան կարգադրութեամբ

ՆՈՐԵԿ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆՆԵՐԻ

ընդունել կ'սկսուին սեպտեմբերի 1-ից, որի համար պէտք է զի-
մեք ուսումնարանի տեսուչ պ. Կարապետ Թէմուրազեանցին: Ու-
սումնարանը գտնվում է իւր նախկին տեղը և կարճ ժամանակից
յետոյ կը տեղափոխուի իւր սեպտական նորաշէն բնակարանն.
Նախագահ վարչութեան՝ Մ. ՍԱԼԱՄԵԷԴԵԱՆ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ԹՈՒՆՏՈՒԹԵԱՄԲ

ՍՐԵԿՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Թ Ե Յ Լ Ի Ս Ո Ւ Մ

ԵՐԿՈՒ ՍԵՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ե Ր Ր Ր Գ ա ռ ա յ ի

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնադիտական տեսարա-
կան կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել
գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:
Կուրսերը երկու բաժանմունքից են կազմած. մեծ բաժանմունք՝
մէկ տարուայ և փոքր բաժանմունք՝ երկու տարուայ դասընթացով:
Իզական սեռի անձինքներից առանձին բաժանմունք է կազմվում Ա-
շակերտների պատշաճ՝ յառաջադիմութեան համար, նոցա թիւը իւ-
րաքանչիւր բաժանմունքի մէջ սահմանափակ է:

Աւանդել տարակալք տղան 1) Առևտրական Տ Ն տե-
սութիւն 2) Առևտրական Թուարանութիւն և
վարձութիւններ համարի վերայ 3) Հաշուապահութիւն
(պարզ, կրկնակի և բաժնային) 4) Առևտրական Թիւրակ-
ցութիւն 5) Առևտրական և մօլաբ հաշի կանոն-
նադրութիւն ցանկացողների համար ևս 6) Փրահսերէն
լեզու 7) Գեղագրութիւն:

Տեսական բացարձակութիւնների հետ, որտեղ միայն հնարաւոր է,
կատարվում են գործընթացաբար գործնական վարժութիւններ: Որ-
պէս զի աշակերտները կարողանան ձեռք բերել հաշուապահութիւ-
նից լուրջ և գործնական գիտութիւն, մեծ բաժանմունքի մէջ կազ-
մած կը լինի օրինակի զբաղմունք:

Տարեկան վարձը (բացի ֆրանսերէն լեզուի և գեղագրութեան
դասերից) մեծ բաժանմունքի համար 125 ռուբլի է, իսկ փոքր բա-
ժանմունքի համար 75 ռուբլի: Գիշերօթիկ աշակերտները ընդուն-
վում են առանձին պայմաններով:

Մեծ բաժանմունք մանուկներ պէտք է ներկայացնեն միջնակարգ
ուսումնարանի 4 դասարան վկայական. իսկ ովքեր չեն ներկայաց-
նում պայմանի վկայական, նորանք նախապէս քննութեան են են-
թարկվում ուսուցչից և թուարանութիւնից: Փոքր բաժանմուն-
քի համար պէտք է գիտնալ գրել և կարդալ ուսուցչից և թուա-
րանութեան չորս գործողութիւնները: Դասաւանդութիւնները կա-
տարվում են երկուրեւ ժամերի և ուսուցչին լեզուով. իսկ նոյն
առարկաները կ'աւանդուեն և հայերէն, եթէ առնուազն 6 ցանկա-
ցող յայտնուին:

Աւարտող աշակերտները հարցաքննութիւններից յետոյ ստանում
են ատեստատներ իրանց ցոյց տուած յառաջադիմութեան համա-
մատ:

1884-85 տարուայ ուսման ընթացքը սկսվելու է սեպտեմբերի
15-ից: Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ամենայն
օր, երեկոյան 5-ից մինչև 8 ժամը: Մանրամասն տեղեկութիւններ
ու. կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի ստանալ ձրի ապէս
եղբարց Գովհանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնու-
ղե բնակարանում: Ստուգելի և Բախչեփակի փողոցների անկիւնում
Ալէքսանդր Ղորղանեանի տանը, № 21: Ոտարաքաղաքացիք զիմում
են կուրսերի հիմնողն՝ Вѣ ТИОЛИСТ. Степану Мануэляну:

Մանուկներ. «Առևտրական կուրսեր» հիմնողը պատիւ ունի ծանօթաց-
նել հասարակութեանը, որ երկու տարուայ միջոցում աւարտել են 21 աշա-
կերտ, որոնցից միայն 5-ը դեռ արդէ պարագայում ու պատիւ չ'ունեն. ուս-
տի այն անձից, որոնք կը կամենան իրենց առևտրական գործերի համար
ուսման ընթացքը տարածած աշակերտներ ունենալ, թող բարեհաճեն զիմել
վերոյիշեալ հասցէով:

3—5